



ՀԲԸՄ

2006 - 2007

ԵՐԿԱՄԵՆԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՆԵՐԿԱՑԱՑՈՒԱԾ 85^{րդ} ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 4, 2008 ՀԱ.Լ.ԷՊ, ՍՈՒՐԻԱ.

ՀԲԸՄ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴ 2006 – 2007

2006 ՀԲԸՄ Կեդրոնական Վարչական Ժողով

Նախագահ
Պերն Սեդրակեան

Փոխ Նախագահներ
Սարգիս Տեմիրճեան եւ
Արշալիր Կէօննեան

Գանձապահ
Նազար Նազարեան

Ատենադպիր
Ժոզէֆ Պասրալեան

Պատուոյ Անդամ
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.
Ամենայն Հայոց Կաթողիկոս

Կեդրոնական Վարչական Ժողովի Ատենապետ
Լուիզ Մանուկեան Սիմոն

Փոխ Ատենապետ
Նազար Նազարեան

Անդամներ
ԱՄՆ՝ Մ. Մայքըլ Անտուր,
Գերօլ Պաղտասարեան-Ասլանեան,
Րիչըրտ Մանուկեան, Պենոն Սեւան,
Սէմ Սիմոնեան, Սիման Սիմանեան,
Տիգրան Թերիզեան
ՖՐԱՆՍԱ՝ Արիս Ադամեան,
Լեւոն Քէպապեան
ՍՈՒՐԻԱ՝ Գառնիկ Եագուպեան

Պատուակալ Անդամ
Պէրի Զորթեան

Ի յիշատակ
Պօղոս Նուպար, Հիմնադիր
Ալեք Մանուկեան, Ցկեանս Պատուակալ
Նախագահ

Ըստ Դեկտեմբեր 9, 2006ին գումարուած
Ընդհանուր Ժողովին, նոր Կեդրոնական
Վարչական Ժողով մը ընտրուեցաւ եւ
հաստատուեցաւ Խնամակալներու Խորհուրդը:

Նախագահ
Պերն Սեդրակեան

Փոխ Նախագահ
Արշալիր Կէօննեան

Գանձապահ
Սէմ Սիմոնեան

Ատենադպիր
Պերն Փալիագեան

Պատուոյ Անդամ
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.
Ամենայն Հայոց Կաթողիկոս

Անդամներ
ԱՄՆ՝ Մ. Մայքըլ Անտուր,
Գերօլ Պաղտասարեան-Ասլանեան,
Ժոզէֆ Պասրալեան, Երուանդ Տեմիրճեան,
Նազարէթ Ֆըստըրեան,
Արտա Յարութիւնեան,
Սարգիս Ճէպէնեան, Լեւոն Նազարեան,
Սիման Սիմանեան, Տիգրան Թերիզեան
ԱՐԺԱՆԹԻՆ՝ Ռուբէն Քէշիշեան
ՖՐԱՆՍԱ՝ Արիս Ադամեան,
Լեւոն Քէպապեան
ԶՈՒԻՑԵՐԻԱ՝ Վահէ Կապրաշ
ՍՈՒՐԻԱ՝ Վազգէն Եագուպեան

Խնամակալներու Խորհուրդ
Սարգիս Տեմիրճեան, Րիչըրտ Մանուկեան,
Նազար Նազարեան,
Լուիզ Մանուկեան Սիմոն,
Գառնիկ Եագուպեան

Պատուակալ Անդամ
Պէրի Զորթեան

Ի յիշատակ
Պօղոս Նուպար, Հիմնադիր
Ալեք Մանուկեան, Ցկեանս Պատուակալ
Նախագահ



ՀՊԱՐՏԱԼԻ ԱՆՅԵԱԼ, ԼՈՒՍԱՇՈՂ ԱՊԱԳԱՅ
PROUD PAST, EXCITING FUTURE



Լուսանկար՝ Կարո Վ. Վարժապետեան (Եգիպտոս)

Նախագահին Պատգամը

ՄԵՐ ԱՆԴԱՄ-ԱՆԴԱՄՈՒՉԻՆԵՐՈՒՆ, ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒՆ ԵՒ Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱԻԱՏԱԻՈՐՆԵՐՈՒՆ



Պահպանելով տարիներու աանդուփին մը, երկամեայ այս տեղեկագիրը կը փորձէ ժամանակի պարունակին մէջ ամփոփել Հ.Բ.Ը.Միութեան անցնող երկու տարիներու գործունէութիւնը եւ նիւթարարոյական հաշուեկշիռը: Պարզուածը անշուշտ ծաւալուն եւ տպաւորիչ պատկեր մըն է, սակայն կարեւոր է անդրադառնալ, թէ մեր Միութեան գործունէութիւնը, իր անկիւնադարձային այս հանգրուանին, կարելի չէ սահմանել կամ ըմբռնել որպէս ձեռնարկներու կամ իրագործումներու շարք մը, այլ՝ զայն պէտք է արժեւորել իբր նախաձեռնութիւններու համակարգ մը, որ դէպի ապագայ ուղղուած հաստատ քայլերով եւ նոր կողմնորոշումներու որդեգրումով, կը նպատակադրէ նոր հրամայականներու դիմաց, արդիւնաւոր կերպով իրագործել Միութեան համահայկական ազգային, մշակութային, դաստիարակչական եւ մարդասիրական անշեղ նպատակները:

Անցնող երկու տարիները յատկանշուեցան աշխարհատարած մեր մասնաճիւղերուն կողմէ իրագործուած շեղ միջոցառումներով, որոնք նշեցին Միութեան 100-ամեայ փառաւոր անցեալը, վեր առնելով ազգային գոյակերտումի գործընթացին մէջ անոր կատարած նախախնամական դերը, ընդգծելով հիմնադիրներու եւ յաջորդական նախագահներու իմաստուն առաջնորդութիւնը, ժամանակին հետ քայլ պահելու կազմակերպչական հաննարը, պատասխանատուութեան եւ հաշուետուութեան անոնց խոր գիտակցութիւնը, ազգային խարսխային կառոյցներու կառչածութիւնը եւ Մայր Հայրենիքին հանդէպ անխախտ հաւատն ու ամբողջական նուիրումը: Տուեալներ, որոնք Միութեան ապահոված են իր այսօրուան դիրքը եւ կարողականութիւնը, ու մանաւանդ անոր արդարօրէն շահուած համաժողովրդային վստահութիւնը:

Անցեալի փորձառութիւնը ապագային կամրջող այս հանգրուանին, ձեւաւորուեցան Միութեան նոր կողմնորոշումը եւ տեսլականները: Սփիւռփի առանցքային գաղթօճմախններու իրադրութեան բնութագրումը ի յայտ բերաւ, թէ մեր ազգը, հայրենիք եւ սփիւռք ամբողջական հասկացողութեամբ, այսօր



կը դիմագրաւ Գնակատագրական նոր հանգրուան մը՝ իր ինֆուօթիւնը սահմանող նոր հասկացողութիւններով: Հետեւաբար մեր կողմէ առնուած քայլերն ու գործընթացը կարեւոր կշիռ պիտի ունենան մեր ազգի հետագայ լինելիութեան համար:

Այս հասկացողութեամբ եւ պատասխանատուութեան խոր գիտակցութեամբ, շարունակելով տարբեր մարզերու իր ընթացիկ գործունէութիւնը, Հ.Բ.Ը.Միութիւնը իր սեփական առարկան դարձուցած է նոր սերունդը, որպէս առողջ հերթափոխութեան գրաւական: Ազգային դիմագիծի եւ ոգիի կերտումը, ազգային խնդիրներու նկատմամբ հետաքրքրութիւններու արժարժուումը, եւ մանաւանդ նոր սերունդը հայրենիքի իրականութեան հաղորդակից պահելու միջոցառումները, այսօր կը կազմեն մեր նոր նախաձեռնութիւններու մեկնակէտը:

Հ.Բ.Ը.Միութեան Երոսպայի վարչական նոր կառոյցի ստեղծումը, Երոսպայի տարբեր երկիրներու եւ Ռուսիոյ մէջ երիտասարդ Արհեստավարժներու շարժումի նոր փոխադրումները, Հայաստանի մէջ արդէն գործադրութեան դրուած սկաուտական բանակավայրն ու երիտասարդական աշխատանքային արշաւները, վեց լեզուներով հայ լեզուի, պատմութեան եւ մշակոյթի հեռակայ դասընթացի աշխատանքները, ասպարէզային փորձառութեան ընդարձակուող գործունէութիւնը, եւ սփիւռահայ երիտասարդութեան համար կրթական, մշակութային եւ ընկերային ամենաարդիական միջոցառում հանդիսացող Երեւանի ՄԿԳՆԵՍԻ Համալիրի կառուցման ուղղութեամբ առնուած գործնական քայլերը, շօշափելի դրսեւորումներն են համահայկական մեր մեծ Միութեան նոր արեւելումին:

Ճիշդ է թէ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը այսօր, աւելի քան երբէք, կը վայելէ տնտեսական հզօր կարողականութիւն եւ համաժողովրդային վստահութիւն: Սակայն նոյնքան եւ

աւելի լայնածաւալ եւ բարդ են մեր համագգային կարիքները եւ հրամայականները: Համաշխարհային տնտեսական իրադրութիւնը եւ անոր ժխտական անխուսափելի հետեւանքները ներկայ եւ յառաջիկայ տարիներուն, շրջահայեցութիւն, խոհեմութիւն եւ նորարարութեան ոգի ու կամք կը թելադրեն մեզի: Հետեւաբար սրտագին կոչ կ'ուղղեմ մեր անդամ-անդամուհիներուն, մասնագիտներուն եւ Միութեան հաստատուներուն, ուժերու առաւելագոյն լարումով, եւ միասնական ճիգերով առաջ տանելու մեր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ազգանուէր գործունէութիւնը, հաղորդակից մնալու ժամանակի շունչին, մասնակից ըլլալու մեր ժողովուրդի դէպի պայծառ ապագայ երթին, ու մանաւանդ՝ տեսական մեր նոր կառոյցներու կերտումը դիտելու երիտասարդութեան աչքերով ու ձգտումներով, եւ մեր պատասխանատուութիւնները պատուով յաջորդ սերունդին փոխանցելու բարձր գիտակցութեամբ:



Պերն Սեդրակեան
Նախագահ

ՀԲԸՄ Կեդրոնական Վարչական Ժողով եւ Խնամակալներու Խորհուրդ (ձախէն աջ) Արտա Յարութիւնեան, Սիւնն Սիւնեան, Նազար Նազարեան (Խնամակալ), Վազգէն Եագուպեան, Պերն Փափագեան, Մ. Մայրը Անտուր, Արշակիր Կէօնեան, Երուանդ Տեմիրեան, Արիս Աղամեան, Սէմ Սիմոնեան, Լուիզ Մանուկեան Սիմոն (Խնամակալ), Պերն Սեդրակեան, Սարգիս Ճէյէնեան, Նազարէթ Ֆրաւրճեան, Գերոյ Պաղտասարեան-Ապանեան: Բացակայ— Ժողովի Պարպեան, Սարգիս Տեմիրեան (Խնամակալ), Վահէ Կապրաշ, Լեւոն Քէլպապեան, Ռուբէն Քէշիշեան, Բիշրոս Մանուկեան (Խնամակալ), Լեւոն Նազարեան, Տիգրան Թեւրիզեան, Գառնիկ Եագուպեան (Խնամակալ)





ԳԱՆԱՏԱ

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Օբլընտ-Սան Ֆրանսիսքո
ԵՍ

Սիլիքոն Հովիտ
Ֆրեզնո

Հարաւային Գալիֆորնիոյ Երջանակ

Ասպետներ Կլէնտէլ/Փասատինա Փասատինա Երկրորդական Վարժարան
ԵՍ
Արտաազդ Թատերախումբ Սարդարապատ Պարախումբ Փողերախումբ Յաջորդ Սերունդ Խորհրդատուական Ծրագիր Երիտ. Գործ.

Լու Անճելուս - Հայ Կին Օրէնն Քաունթի Ընթացքայ Դպրոց
ԵՍ

Փայմ Սիբիկս Սան Տիէյո Սան Տերնանտոյի Հովիտ Մանուկեան-Տեմիթեան Վարժարան Երիտ. Գործ.

Թորոնթօ Դանիէլ Էս Ալիս Զարուկեան Վարժարան
ԵՍ

Թատերախումբ Ամառնային Տերեկային Ճամբար Երիտ. Գործ.

Տիթոնյօ, Միշ-Ալէք Էս Մարի Մանուկեան Վարժարան
ԵՍ

Շիբալիօ, Իլլ-Շարաթօրէայ Դպրոց Պատանեկան Պարախումբ

Ֆիլադելֆիա
ԵՍ

Գիլլընտ, Օհայօ Ընթացքայ Դպրոց

Ուաշինկթօն, Տ.Ս.
ԵՍ

Մոնթրէալ Արմէն Գէպէք-Ալէք Մանուկեան Վարժարան Ոսկեայ Տարիքի Յանձնախումբ Երիտ. Գործ.

Նիւ Ինկլընտի Երջանակ Փրովիսթրն Արանց Յանձնախումբ
ԵՍ

Նիւ Եորք ՀԲԸՄի Կեդրոնական Գրասենեակ Նիւ Եորքի Յատուկ Զեռնարկներու Յանձնախումբ
ԵՍ

Անդրանիկ Պարախումբ Ասպար. Փործ. Ամառնային Ծրագիր Նուպար Ճամբար

ԱՆԳԼԻՍ

Լոնտոն
ԵՍ

ՔՐԱՆՏԱ

Ֆրանսայի Երջանակ

Լիոն Երիտ. Գործ.

Մարսէլ Երիտ. Գործ.

Նիս Փարիզ Ընթացքայ Դպրոց
ԵՍ

Գողթան Երգչախումբ Անազանգ Թատերախումբ Նուպարեան Գրադար Ամառնային Ճամբար Ասպար. Փործ. Ամառնային Երիտ. Գործ.

Սէն Ժանն / Սէն Էլի Երիտ. Գործ.

Վալանս Երիտ. Գործ.

Վիէն Ընթացքայ Դպրոց Երիտ. Գործ.

Հիւսիսային Ամերիկա

Հարաւային Ամերիկա

Միջին Արեւելք



ՊՐԱԶԻԼ

Սան Փաուլօ
ԵՍ
Երիտ. Գործ.

Գորտոպա Արարատ Պարախումբ Ծիրանի Նուագախումբ Ամառնային Տերեկային Ճամբար Երիտ. Գործ.

Մոնթէվիտօ Նուպարեան-Մանուկեան Վարժարան Կոունկ Երգչախումբ Երիտ. Գործ.

ՈՒՐՈՒԿՈՒԷՅ

Պուէնոս Այրէս Մարի Մանուկեան Վարժարան Շնորհալի Երգչախումբ Ամառնային Տերեկային Ճամբար Երիտ. Գործ.

Արժանութիւն



ԹՈՒՐԿԻԱ

ԿԻՊՐՈՍ

Լաոնաքա
Լիմասոլ
Նիկոսիա
Երիտ. Գործ.

Պաղտատ Ընթացքայ Դպրոց Երիտ. Գործ.

ԻՐԱՆ

Թեհրան Մարի Մանուկեան Վարժարան Կիլիկիական Նուարդ Կիլիկիական ԵՍ
Երիտ. Գործ.

ԼԻԲԱՆԱՆ

Լիբանանի Երջանակ Պէյրութ/Սիւն Էլ Ֆիլ/Ամանոս/Անթիլիաս Ասպետներ Պօղոս Գ. Կարմիրեան Վարժարան Դարուհի-Յովակիմեան Վարժարան Լեւոն Կ. Նազարեան Վարժարան
ԵՍ

Անդրանիկ Պարախումբ Կրտսերաց Երգչախումբ Վահրամ Փափազեան Թատերախումբ Դարմանատուն ՀԵԼ Ամառնային Տերեկային Ճամբար Երիտ. Գործ.

Թրիփոլի Երիտ. Գործ.

Զահլէ Երիտ. Գործ.

ՍՈՒՐԻԱ

ԵՐՈՒՍԱԿԷՄ

ՅՈՐԴԱՆԱՆ

Սուրիոյ Երջանակ

Հալէպ Ասպետներ Լազար Նաճարեան-Գալուստ Կիլիկիական Վարժարան ՀԵԼ Պարախումբ Պետրոս Աղամեան Թատերախումբ Սենեկային Նուագախումբ Մանկական Երգչախումբ Փողերախումբ Սարեան Նկարչական Ակադեմիա Երիտ. Գործ.

Դամասկոս Կիլիկիայի Կիլիկիական Վարժարան Երիտ. Գործ.

Գամիշլի Ընթացքայ Դպրոց Նոր Սկիզբ/Ախթամար Պարախումբ Ամառնային Տերեկային Ճամբար Երիտ. Գործ.

Քեսապ Ամառնային Ճամբար Լաթաքիա Նագուսիէ

Աշխարհասփիւ չԲԸՄ 2006-2007

ՉԲԸՄը իր բարեսիրական, կրթական ու մշակութային բազմաբնույթ գործունէութեամբ օգտակար կը հանդիսանայ շուրջ 400 000 հայերու:



Պայմանանշաններ

- Երկիրներ ուր Կրթանպաստ ստացող համալսարանականներ կ'ուսանին
- Երկիր
- Օրջանակային Յանձնաժողով ★
 - Մասնաճիւղ / Յանձնախումբ ☆
 - Կեդրոն / Գրասենեակ ■
 - Վարժարան / Համալսարան ■
 - Ծաբաթօրեայ Դպրոց □
 - Երիտ. Արհեստավարժներ (ԵԱ) ■
 - Ար. Էջմիածնի հետ գործակցաբար ◆
 - Բարեսիրական Ծրագիր ■
 - Մշակութային Ծրագիր ■
 - Բժշկական Սպասարկութիւն ■
 - Ասպարէզային Փորձառութեան Ամստնային Ծրագիր □
 - Երիտասարդական Գործունէութիւն ■

Հայաստան եւ Ղարաբաղ

- Վանաձոր
 - ◆ Վանաձորի Հայորդեաց Կեդրոն
 - ◆ Ս. Գրիգոր Նարեկ Եկեղեցի Յի Կանանց Կեդրոն
- Սեւան
 - ◆ Վազգէնեան Ծեմարան
 - ◆ Տարեցներու Ծաշարան
- Էջմիածին
 - ◆ Էջմիածնի Հայորդեաց Կեդրոն
 - ◆ Մայր Տաճարի Արտաքին Խորան
 - ◆ Կղերականներու Բնակարան
 - ◆ Տարեցներու Ծաշարան
- Զրազդան
 - ◆ Տարեցներու Ծաշարան
- Երեւան
 - ◆ Արարկիրի Հայորդեաց Կեդրոն
 - ◆ Մայաթիայի Հայորդեաց Կեդրոն
 - ◆ Նորքի Հայորդեաց Կեդրոն
 - ◆ Հայաստանի Ամերիկեան Համալսարան Երեւանի Պետական Համալսարան ԵԱ
 - ◆ Արարկիրի Եկեղեցի
 - ◆ Ս. Երրորդութիւն Եկեղեցի
 - ◆ Ս. Գրիգոր Մայր Տաճար
 - ◆ Ար. Սարգիս Եկեղեցի
 - ◆ Երեք Տարեցներու Ծաշարաններ Հայաստանի ֆիլիարմոնիք Նուագախումբ
 - ◆ Ս. Ներսէս Մեծ Հիւանդանոց Գերձայնային Ախտաճանաչման Կեդրոն Ասպար. Փորձ. Ամստնային Ծրագիր Պատանհներու Հայաստանագնացութիւն
- Ստեփանակերտ
 - ◆ Երկրորդական Վարժարան #7
 - ◆ Զոհումաճ Մարտիկներու Բնակարան
 - ◆ Ղարաբաղի Սեւեկային Նուագախումբ
- Նորաշեն
 - ◆ Բարեշէն Ղարաբաղի Վերաբնակեցման Ծրագիր

Ափրիկէ/Ասիա/Աւստրալիա

- ԵԳԻՊՏՈՍԻ ԵՐԶԱՆԱԿ
 - ◆ Աղեքսանդրիա Երիտ. Գործ.
 - ◆ Գահիրէ Ծիածան Մանկական Երգչախումբ Բարեսիրական Ծրագիր
 - ◆ Հելիոպոլիս Երիտ. Գործ.
- ԵԳԻՊՏՈՍ
 - ◆ Ատիս Ապպա
- ԵԹՈՎՊԵՏԱ
 - ◆ Ծոհանձնէսպորկ
- Ռուսիա
 - ◆ Միտնի Ալեքսանդր Նախակրթարան Ծաբաթօրեայ Դպրոց ԵԱ
 - ◆ Երիտ. Գործ.

- ԱՌՍՏՐԱԼԻԱ
 - ◆ Մելբուռն Երիտ. Գործ.



Երկամսյա Տեղեկագիր 2006 - 2007

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

Դեկտեմբեր 31

ԳՈՑՔ	Դեկտեմբեր 31	
	2007	2006
Ընթացիկ Գոյք		
Դրամատան մէջ պատրաստ	\$ 9,022,575	\$ 7,353,159
Արժեթուղթեր	209,554,448 (*)	195,427,642 (*)
Գանձելի աւանդներ/հաշիւներ	3,351,823	6,446,262
Գանձելի տոկոս	4,170,576	3,346,242
Գումար	226,099,422	212,573,305
Անշարժ կալուածներ	73,428,803	71,961,931
Սարքեր, կարասի եւ այլ գոյքեր	1,530,320	1,627,376
Գումար Գոյքի	301,058,545	286,162,612
ՊԱՐՏՔԵՐ ԵՒ ԶՈՒՏ ԳՈՑՔ (ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ)		
Պարտականք		
Վնարելի հաշիւներ	\$4,966,951	\$5,276,774
Վնարելի պարտաթուղթեր	393,277	440,628
Գումար Պարտքերու	5,360,228	5,717,402
Զուտ Գոյք (Հիմնադրամներ)		
Ոչ պայմանաւորեալ	59,736,830	57,381,037
Առժամայէս պայմանաւորեալ	37,187,962	32,104,380
Պայմանաւորեալ	198,773,525	190,959,793
Գումար Զուտ Գոյքի (Հիմնադրամներու)	295,698,317	280,445,210
Գումար Պարտականքներու եւ Զուտ Գոյքի (Հիմնադրամներ)	301,058,545	286,162,612

(*)Կը ներկայացնեն ՀԲԸՄիութեան արժեթուղթերու տոմարական արձանագրութիւնը 12/31/2006-ին եւ 12/31/2007-ին որոնց սակարանային արժէքը յաջորդաբար Ամերիկեան Տոլարով \$214,601,984 եւ \$233,435,384 են

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀԲԸՄ Նիւթական Երկամսյա Տեղեկագիր
10-Տարուայ Բաղդատական Գումարներուն

	2007	%*	2006	%**	1996
Ընդհ. Գոյք	\$301,058,545	5.21%	\$286,162,612	57.12%	\$182,135,549
Ընդհ. Մուտք	51,263,852	7.34%	47,759,992	83.48%	26,030,651
Ընդհ. Ելք	36,010,745	7.46%	33,510,010	36.94%	24,470,108

*Միամսյա % Յաւելում (Նուագում) **10-ամսյա % Յաւելում (Նուագում)

Ամերիկեան Տոլարով

ՄՈՒՏՔ

Օժանդակութիւն՝

Նուիրատուութիւններ
Անդամավար
Յատուկ Զեռնարկներ եւ այլ մուտքեր

Հատոյթ՝

Շահաբաժին եւ տոկոս
կալուածային
Դպրոցական

ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐՈՒ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

Վարչական Հատոյթ, Պահեստի
Գումար եւ Հիմնադրամի Յաւելում
ԳՈՒՄԱՐ ՄՈՒՏՔԻ

ԵԼՔ

Յայտագիրներ եւ Վարչական Ծախք
Յայտագիրներ՝

Կրթական
Մշակութային
Կրօնական
Մարդասիրական

Վարչական Ծախք
Դրամահաւաքի Ծախք
Դրամասակային Տարբերութիւն/
Վերադասաւորում

Գումար՝ Յայտագիրներ եւ Վարչական Ծախք

Յաւելում (Նուագում) Ելեմուտքի

Միջ հիմնադրամային փոխանցում
Յաւելում (Նուագում) Հիմնադրամներու

Հիմնադրամներ՝ տարեսկիզբին

Հիմնադրամներ՝ տարեվերջին

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն

ԵԼԵԻՄՈՒՏՔ

Ա.Ռ. Դեկտեմբեր 31, 2007

Ա.Ռ. Դեկտեմբեր 31, 2006

Ոչ Պայմանաւորեալ	Ա.Ռ. Դեկտեմբեր 31, 2007			Ոչ Պայմանաւորեալ	Ա.Ռ. Դեկտեմբեր 31, 2006		
	Առժամայէս Պայմանաւորեալ	Պայմանաւորեալ	Գումար		Առժամայէս Պայմանաւորեալ	Պայմանաւորեալ	Գումար
\$ 2,350,242	\$ 9,298,734	\$ 7,598,706	\$ 19,247,682	\$ 3,805,536	\$ 7,064,659	\$ 11,042,528	\$ 21,912,723
287,216	-	-	287,216	308,243	-	-	308,243
4,006,765	15,209	60,126	4,082,100	3,708,831	8,783	60,458	3,778,072
6,644,223	9,313,943	7,658,832	23,616,998	7,822,610	7,073,442	11,102,986	25,999,038
13,345,608	1,299,397	-	14,645,005	8,434,234	1,701,534	-	10,135,768
1,974,211	6,540	-	1,980,751	1,665,459	13,546	-	1,679,005
11,021,098	-	-	11,021,098	9,946,181	-	-	9,946,181
26,340,917	1,305,937	-	27,646,854	20,045,874	1,715,080	-	21,760,954
32,985,140	10,619,880	7,658,832	51,263,852	27,868,484	8,788,522	11,102,986	47,759,992
8,398,791	(8,398,791)	-	-	7,029,484	(7,029,484)	-	-
1,696,517	(1,790,079)	93,562	-	1,701,534	(1,829,170)	127,636	-
43,080,448	431,010	7,752,394	51,263,852	36,599,502	(70,132)	11,230,622	47,759,992
18,657,060	-	-	18,657,060	16,109,013	-	-	16,109,013
8,941,730	-	-	8,941,730	8,798,454	-	-	8,798,454
4,188,874	-	-	4,188,874	3,656,629	-	-	3,656,629
1,535,619	-	-	1,535,619	1,617,772	-	-	1,617,772
33,323,283	-	-	33,323,283	30,181,868	-	-	30,181,868
3,263,486	-	-	3,263,486	2,693,153	-	-	2,693,153
215,000	-	-	215,000	234,214	-	-	234,214
(791,024)	-	-	(791,024)	400,775	-	-	400,775
2,687,462	-	-	2,687,462	3,328,142	-	-	3,328,142
36,010,745	-	-	36,010,745	33,510,010	-	-	33,510,010
7,069,703	431,010	7,752,394	15,253,107	3,089,492	(70,132)	11,230,622	14,249,982
(4,713,910)	4,652,572	61,338	-	(1,647,703)	(3,870,453)	5,518,156	-
2,355,793	5,083,582	7,813,732	15,253,107	1,441,789	(3,940,585)	16,748,778	14,249,982
57,381,037	32,104,380	190,959,793	280,445,210	55,939,248	36,044,965	174,211,015	266,195,228
\$59,736,830	\$37,187,962	\$198,773,525	295,698,317	\$57,381,037	\$32,104,380	\$190,959,793	\$280,445,210

**ՀԲԸՄԻ Հովանավորած Ծրագիրները
Հայաստանի և Ղարաբաղի ՄԷջ**

ԾՐԱԳԻՐՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանի Ամերիկյան Համալսարան
Հայաստանի Ֆիլիհարմոնիկ Նուագախումբ
Հայրորդեաց Կեդրոններ (3)
Տարեցներու Հաշարահներ (6)
Սր. Ներսես Մեծ Հիանդանոց
Գերմանացի Ախտանանչաման Կեդրոն
Վազգէնեան Աստուածաբանական
Ընծայարան

ՍՓԻՒՌ-ՔԱՀԱՅ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Երեսանի Ասպարէզային Փորձառութեան
Ամառնային Ծրագիր
Պատանեկան Խմբագնացութիւն,
Ամառնային Համար

ՂԱՐԱԲԱՂ

Ղարաբաղի Սենեկային Նուագախումբ
Ղարաբաղի Վերանակեցման Ծրագիր

ՅԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ

Սր. Էջմիածին - Մայր Տանար
Սր. Էջմիածնի Ծառայութեան Կեդրոն
Սր. Էջմիածնի Ծերանոց
Սր. Էջմիածնի Գեորգեան Ընծայարան
Սր. Էջմիածնի Կղերականներու
Բնակարաններ
Սր. Էջմիածնի Հայրորդեաց Կեդրոն
Սր. Աննա Եկեղեցի
Էրբուրնի Եկեղեցի
Սր. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տանար
Վանաձորի Հայրորդեաց Կեդրոն
Գիւմրիի Յոյր Կանանց Կեդրոն
Վանաձորի Յոյր Կանանց Կեդրոն

ՅԱՏՈՒԿ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՀի Թուային Գրադարան
Սր. Էջմիածնի Կղերականներ
Գիտութիւններու Ազգային Ակադեմիա
Հայաստանի Ֆրանսական Համալսարան
Նոր Այնթապ Դպրոց #2
Զանազան Հրատարակութիւններ
Մատենադարան
Մեդրիի Մանկապարտէզ
Զարեհեցաւանի Մշակութային Կեդրոն
Լուսագիտի Գիւղի Զրամատակարարման
Համակարգ
Լուսակում Գիւղի Զրամատակարարման
Համակարգ
Իրինդ Գիւղի Մշակութային Կեդրոն
Գեղարքունիք Գիւղի
Հանապարհաշինութիւն
Երեսանի Դպրոց #145
Նոր Կեմք Գիւղի Մշակութային Կեդրոն
Սարգսապատ Գիւղի Մշակութային Կեդրոն
Երեսանի Իսահակեան Տուն-Թանգարան
Աջալին Առողջապահական Կեդրոն
Արմախի Գիւղի Կեդրոն
Արաքիլի Հիմնարկ Երեսաններու և
Պատանիներու համար

ՀԱՅԱՍՏԱՆ / ՂԱՐԱԲԱՂ

Բազմաթիւ բարերարներ, նուիրատուներ և բարեկամներ կը շարունակեն զօրացնել մեր կազմակերպութեան բազմաառանակ տարիներու ներկայութիւնը Հայաստանի և Ղարաբաղի մէջ՝ սատար հանդիսանալով հազարաւոր անհատներուն հասնող կենսական ծրագիրներուն: ՀԲԸՄը հպարտ է, որ կեանքը հայրենիքին մէջ կը բարեկաւտի իր բազմաթիւ կրթական, մշակութային և մարդասիրական ջանքերու միջոցով:

Հայաստանի Ամերիկյան Համալսարան

Հայաստանի ակադեմիական շրջանակներուն մէջ առաջնորդող դեր կատարել շարունակելով, Հայաստանի Ամերիկյան Համալսարանը (ՀԱՀ) իր 15րդ տարեդարձը տօնեց Նոյեմբեր 2006ին Լոս Անճելոսի մէջ կազմակերպուած «Կալա» նաշկերոյթով մը: Այս ուղեւորը արձանագրել շատ չանցած՝ ՀԲԸՄի նիւթական օժանդակութիւնը վարկաւորում ստացաւ: Ամէն տարի, գրեթէ 400 ուսանողներ կ'արձանագրուին ՀԱՀի երկու-տարուայ ծրագրին՝ մագիստրոսի աստիճան արժանանալով Առեւտրական Վարչութեան, Յարապահութիւն և Միջավայրի Գիտութիւն, Հարստագիտութիւն, Իրաւաբանութիւն, Բաղաձայնական Գիտութիւն և Միջազգային Գործառնութիւններ, Հանրային Առողջապահութիւն և Համակարգչային Գիտութիւն ճիւղերուն մէջ:

Հայաստանի Ֆիլիհարմոնիկ Նուագախումբ

Հայաստանի Ֆիլիհարմոնիկ Նուագախումբը (ՀՖՆ), որ 1992էն ի վեր ՀԲԸՄի հովանավորութիւնը կը վայելէ, իր 80ամեակը տօնեց Յունիս 8, 2006ին տեղի ունեցած յատուկ համերգով: Այս ուղեւորին տարեդարձի առթիւ, հիւր կատարողներ և ղեկավարներ հրախորհեցան Ֆրանսայէն, Գերմանիայէն, Իտալիայէն, Հավիտէն, Ռուսիայէն, Զուիցերիայէն և ԱՄՆէն՝ ՀՖՆի կողմէ ներկայացուած համերգներուն իրենց մասնակցութիւնը բերելու: Յունիս 2006ին, նուագախումբը շարաք մը անցուց Մոսկուա և համերգներ տուաւ: ՀՖՆը համերգներ տուաւ նաեւ Նուրեմպերկ, Գերմանիա- Պրաթիսլավա, Սլովաքիա և Չեխ հանրապետութեան երկու մեծագոյն քաղաքներ՝ Փրախա և Պրնո, Սեպտ. ու Հոկտ. 2006ին տեղի ունեցած երաժշտական փառատօններու ընթացքին: Փետրուար 2007ին, 110-հոգեկոց այս նուագախումբը Ֆրանսա գնաց և տեղական ՀԲԸՄի մասնակցութիւնը կողմէ կազմակերպուած հիւրախաղային համերգներ տուաւ Լիոն, Մարսէյ, Նիս, Փարիզ, Սէն Էթիէն, Վալանս և այլուր, որոնք մաս կը կազմէին այդ երկրի «Հայաստանի Տարի» կոչուող տօնակատարութեանց:



ՀԲԸՄի կողմէ ֆինանսատրուած Հայկական Ֆիլիհարմոնիկ Նուագախումբը

Հայրորդեաց Կեդրոններ

Ամէն օր, Երեսանի Նորք, Արաքիլի, և Մալաթիա թաղամասերուն մէջ գտնուող ՀԲԸՄի երեք Հայրորդեաց Կեդրոններու սրահները կը լեցուին 3,000 տաղանդաւոր ուսանողներով, որոնք կուգան իրենց հորիզոնները ընդլայնելու և արուեստի նոր բարձունքներուն տիրանալու: 1993էն ի վեր, ՀԲԸՄը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ընկերակցութեամբ, կը հովանաւորէ մշակութային այս հաստատութիւնները, որոնք նկարչութեան, համակարգիչի, ձեռագործի, պարի, մարմնամարզութեան, պատմութեան, լեզուի և երաժշտութեան դասեր կուտան 6էն մինչեւ 16 տարեկան եղողներուն . ասկէ զատ, կեդրոններուն կից մատուցուող ենք, ուսանողները շարաքական եկեղեցական արարողութիւններուն և Սուրբ Գրոց սերտողութեան դասերուն կը մասնակցին: Հոկտեմբեր 17, 2007ին, Նորք Հայրորդեաց Կեդրոնէն 13 տարեկան Մարիամ Մարութեան, որ երեխաներու միջազգային նկարչութեան մրցումի մը մասնակցած էր, առաջին մրցանակ ստացաւ Նիւ Եորքի Միացեալ Ազգերու կեդրոնէն ներս տեղի ունեցած արարողութեան ընթացքին: Մարութեան մէկն էր այն վեց մրցանակակիրներէն, որոնք զատուեցան 12,000 աշխարհամիլիոն թեկնածուներէն՝ մրցման նիւթը՝ «Մենք կրնանք աղբատութեան վերջ տալ» լաւագոյնս պատկերացուցած ըլլալուն համար: ՄԱԿի ցուցահանդէսին մաս կազմեցին Նորք Կեդրոնի երկու այլ ուսանողներուն գործեր ևս:

Ղարաբաղի Սենեկային Նուագախումբը

Նորաստեղծ Ղարաբաղի Հանրապետության մէջ երաժշտական մշակոյթ տարածելու առաջնութիւնը շարունակելով, Ղարաբաղի Սենեկային Նուագախումբը (ՂՄՆ), խմբավար Գեորգ Մուրատեանի ղեկավարութեամբ, բազմաթիւ համերգներ տուաւ վերջին երկու տարիներու ընթացքին եւ այդպիսով շուտով համրաւի տիրացաւ իբր Հարաւային Կովկասի լաւագոյն սենեկային նուագախումբերէն մին, որու հետեւանձնով արտասահմանէն համերգ տալու այլեւայլ հրաւերներ ստացաւ: ՂՄՆի յիշարժան ելոյթներէն կարելի է նշել անոր մասնակցութիւնը Երեւանի մէջ 2006ի ամառը կայացած «ՄԷԿ Ա.գգ, ՄԷԿ Մշակոյթ» փառատօնին, ինչպէս նաեւ յատուկ այն համերգը, որ կազմակերպուած էր ղեկավար Եղուարդ Միրզայեանի 85րդ տարեդարձի առթիւ: 2006ին, Ղարաբաղի Երաժշտական Դպրոցի վարչութեան հետ, Մուրատեան երաժշտական գոլէն մըն ալ հաստատեց, ուր կ'ուսանին ապագայի արհեստավարժ երաժիշտներ:



Նկարչութեան դաս ՀԲԸՄի Հայորդեաց Կեդրոններուն մէկէն մերս

Ղարաբաղի Վերաբնակեցման Ծրագիր

Ղարաբաղի Նախագահ Արկարտի Ղուկասեան եւ փոխ Վարչապետ Անուշահան Դանիէլեան, Բանի մը նախարարներու, բարձրաստիճան պաշտօնեաներու եւ ՀԲԸՄի ներկայացուցիչներու հետ, ներկայ գտնուեցան Ղարաբաղի Հայրութ շրջանի Նորաշէն գիւղի նոր դպրոցի բացումին, որ տեղի ունեցաւ Սեպտեմբեր 2006ին: Այս նախակրթարանը, որ կառուցուեցաւ ՀԲԸՄի Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակի եւ Աւստրալիոյ Միտնի Մասնամիւլի հայթայթած միջոցներով, յարմարութիւն ունի 80 աշակերտ ընդունելու: Կը բաղկանայ ութ դասարանէ, սրահէ, ուսուցչաց հանգիստի սենեակէ, եւ տեսչարանէ: Թողոնթոյի եւ Գահիրէի Մասնամիւլերը, ինչպէս նաեւ ԵԱ Խումբեր ու առանձին նուիրատուներ, նիւսպէս օժանդակեցին այս դպրոցաշինութեան: Հանդիսատի ժապաւէն հատելու արարողութեան հետեւեցաւ հիմնարկէր մօտակայ Ջրակն գիւղի, որ Նորաշէնէն 200 մէթր հեռավորութեան վրայ կը գտնուի: Ջոյգ այս նախաձեռնութիւնները մաս կը կազմեն ՀԲԸՄի Ղարաբաղ Վերաբնակեցման Ծրագրին, որուն սկիզբը դրուեցաւ 2002ին եւ որուն շնորհիւ այն գիւղերը, որոնք Ատրայէնեանի պատերազմէն ֆանդուեցան եւ ապա ամայի դարձան, սկսան վերակառուցուիլ: Ցարդ՝ երկու երկուսանեակ տուներ շինուած են 100է աւելի բնակիչներուն համար:



Նոր Հայորդեաց Կեդրոն ուսանողուհի Մարիամ Մարութեան՝ ստաջին մրցանակի արժանացած իր նկարին առջեւ

Տարեցներու Հաշարահներ

ՀԲԸՄը կը շարունակէ հովանաւորել վեց Տարեցներու Հաշարահներ, որոնք Հայաստանի անկախացումէն ետքը հաստատուեցան Երեւանի, Սեւանի, Էջմիածնի եւ Հրազդանի մէջ: Ատոնք օրական տաք մաշ կը հայթայթեն աւելի քան 1,200 թոշակատուներու եւ որբերու: Բաժինները միշտ բաւարար են, այնպէս որ ընդունողները մաշէն աւելցածը տուն կը տանին ընտանիքի այլ անդամներու եւ քարեկամներու համար: Ասկէ գատ, կամաւոր աշխատողներ կերակուր կը տանին հիւանդներուն եւ տունէն դուրս գալու անկարող անձերուն:



Նորաշէնի աշակերտները ՀԲԸՄի նուիրած գրեկական պիտոյքները կ'օգտագործեն

Վագգէնեան Հեմարան

Գեղատեսիլ Սեւանայ Լիճի ափին գտնուող Վագգէնեան Հեմարանը հոգեկան ովախա մըն է 100է աւելի երիտասարդ տղոց համար, որոնք նուիրուած են Աստուծոյ ծառայութեան: Ընդարձակ համալիրը, եկեղեցին եւ առանձնացած դիրքը աւելի արդիւնաւէտ կը դարձնեն անոնց ստացած կրօնական դաստիարակութիւնն ու կրթութիւնը, որով զինուած՝ նորընծայ կոերականները կ'երթան աշխարհատարած հայ համայնքներէն մերս իրենց ծառայութիւնը մատուցանելու:



ՀԲԸՄի Հայաստանի Ներկայուցչութեան Տնօրէն Աշոտ Ղազարեան (ձախ) եւ Սիւսան Հիւանդանոցի Տնօրէն Արթուր Թատեռոսեան (կեդրոն) կը բնենն որպէս նուէր դրկուած գերձայնային մեքենաները (Ֆոտոլուր)

Գերձայնային Կեդրոն

Նպատակ ունենալով Հայաստանի մէջ բժշկութեան մարզէն մերս առաջնորդող դեր կատարելու, ՀԲԸՄի Գերձայնային Կեդրոնը մեծ քայլեր կատարած է վերջին երկու տարիներու ընթացքին, յաւելումովը 22 նոր գերձայնային մեքենաներու, որոնք հնարաւորութիւնը կը ստեղծեն կանուխ յայտնաբերութիւններ ընել եւ արտարգելիչ միջոցներու դիմել, այդպիսով Հայաստանի, Ղարաբաղի եւ Ջաւախի մէջ շատ մարդկանց կեանքը վերկելով: Կեդրոնէն մերս, բժիշկներ կրթութիւն են վարժութիւն ձեռք կը իրեն: Կանոնաւորապէս ալ, Կեդրոնը արտասահմանէն կ'ստանայ մի ամբողջ շարան ակադեմիական նիւսերու (հանդէս, տեսաժապաւէն, եւ այլն): ՀԲԸՄի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ ԲԺ Լեւոն Նազարեան 2000ին հիմնեց այս հաստատութիւնը իբր բաժին Երեւանի Պետական Բժշկական Ինստիտուտին, գործակցութեամբ Փենսիլվանիոյ նահանգի (ԱՄՆ) Թովմաս Ճէֆրըսըն Համալսարանի Հիւանդանոցին:

ԿՐԹՈՒԹԻՒՆ



ՀԲԸՄ Մանուկեան-Տեմիրեան Վարժարան, Գանդակ Փարք, Գալիֆ., ԱՄՆ

Անցնող տասնամյակներուն, Հայկական Բարեգործական Աւելանալուր Միութեան կրթական գործունէութիւնը դրսեւորուած է դպրոցներու եւ կրթաթոշակներու միջոցաւ, որոնք կեանքի մէջ յաջողութեան առիթ ընձեռած են աշխարհի տարբեր գաղթօնախններու մէջ ապրող բազմահազար հայորդիներու, միաժամանակ նպաստելով հայ լեզուի եւ մշակոյթի պահպանումին:

Կրթական Բաժնի տնօրէնին պարբերական այցելութիւններով, Միութեան Կրթական Բաժինը շարունակեց իր վերհսկողութեան եւ համակարգումի աշխատանքները աշխարհաստարած իր դպրոցներու եւ 5500-է աւելի աշակերտներու կրթական ծրագիրներուն եւ աշխատանքներուն արդիւնատրութեան ուղղութեամբ: Այս շրջանին վարժարաններու համակարգին միացաւ Փաստիմայի նորահաստատ երկրորդական վարժարանը: Ինչպէս բոլոր անկախ դպրոցները, Հ.Բ.Ը.Միութեան դպրոցներու ցանցին մաս կազմող վարժարաններէն շատերը, կը դիմագրասեն անկախ այլ վարժարաններու յատուկ՝ մրցակցութեան եւ տնտեսական խնդիրներ, որուն իբր հետեւանք, պիտնէական յարանուն բաց կ'արձանագրեն: Հետեւաբար, Կեդրոնական Վարչութիւնը շարունակեց մեծագումար ներդրումներով օժանդակել դպրոցներուն, որպէսզի անոնք անխափան

շարունակեն իրենց կրթական ծառայութիւնը: Կրթական մարզէն ներս նոր զարգացումներու եւ Սփիւռքի սերնդափոխութեան հրամայականներէն մեկնելով, Միութեան Կրթական Մարմինը համընդհանուր ծրագրումով իր սեւեռումը եւ ուժերը կեդրոնացուց չորս գլխաւոր ուղղութիւններու վրայ, որոնք կը մեկնին դաստիարակութեան լայն եւ բազմաբնոյթ հասկացողութենէն: 1)Ներկայ աշխարհաստարած դպրոցները եւ անոնց տնտեսական եւ որակական տնօրինումը՝ փոխուող ընկերային կառոյցներու եւ ակնկալութիւններու լոյսին տակ: 2)Համապարանական կրթաթոշակներու բնոյթի եւ նպատակներու վերամշակում, աւելի արդիւնատր ձեւով ֆաջալերելու համար տաղանդներու յայտնաբերումը եւ ազգային կեանքի մասնակցութեան աշխուժացումը: 3)Հայերէնի դաստանդման արդիւնատրութեան համար ծրագիրներու, օժանդակ նիւթերու եւ ուսուցիչներու փորձառութեան համադրում, ամենօրեայ եւ յատուկ դպրոցներու առնչութեամբ: 4)Նոր նախաձեռնութիւններու մշակում, նպատակ ունենալով հասնիլ համասփիւռքեան լայն զանգումներուն, որոնք դուրս կը գտնուին հայկական դասական կառոյցներու եւ շրջանակներու ծիրէն, աւելի արդիւնատրութեամբ օգտագործելու համար մեր կարելիութիւնները:

Հ.Բ.Ը.Մի Կրթական Բաժին – Նոր Տեսլական

Հ.Բ.Ը.Միութեան Կրթական Բաժնի նոր տեսլականը կը մեկնի ակիւռֆահայ նոր սերունդի իրադրութեան տունակներէն: Աշխարհագրականօրէն հայրենիքէն հեռու գաղթօնախններու մէջ, որոնք ստուարաթիւ հայկական զանգումներ կը ներկայացնեն այսօր, նոր սերունդը շաղուած է իր շրջապատի ընկերային եւ մշակութային իրականութեան եւ հակամետ է հեռանալու հայ կեանքի աւանդական կառոյցներէն: Հայեցի դաստիարակութեան ընթացիկ միջոցառումները, որոնք ամենօրեայ եւ միօրեայ դպրոցներն են, կորսնցուցած են իրենց արդիւնատրութիւնը: Ծնողներ կը հակին իրենց զաակները դրկելու

ոչ հայկական դպրոցներ՝ ապագայի համար յաջողութեան առաւել կարելիութիւններ ապահովելու համոզումով: Այս իրողութիւններու դիմագրասումը կ'ենթադրէ նոր աշխատելաձեւերու որդեգրում եւ կազմակերպչական համապատասխան կառոյցներ, որոնք դրսեւորուեցան Կրթական Բաժնի Տնօրէնի պաշտօնին ստեղծումով, զորս ստանձնեց Պրն. Արթուն Համալեան եւ Կրթական Խորհրդատու Յանձնախումբով, որուն մասնակցելու հրաւիրուեցան կրթական մարզէն ներս լայն եւ բազմաբնոյթ փորձառութիւն ունեցող մասնագէտներու խումբ մը:



Դամասկոսի Կիլլայի Կիլպէնկեան Վարժարան



Հալէպի Լազար Նանարեան-Գալուստ Կիլպէնկեան Վարժարան



Պուէնոս Այրէսի Մարի Մանուկեան Վարժարան

Կրթական Խորհրդատու Ցանճնախումբ

Արթին Արսևանյան, Անի Պազայան, Նուէր Պէլլերեան, Նաթալի Գարրիէլեան, Նորին Հանինյան, Գարմէն Մանսուրեան, Մէլրի Փալիագեան, Ռուզաննա Թօփանյան, Նիկոլ Վարդանեան, Անի Եագեան, Երուանդ Զօրեան, Գարո Ասլանեան (Կեդրոնական Վարչական Մարմնի Ներկայացուցիչ):

Կրթաթոշակներու Ցանճնախումբ եւ Համալսարանական Կրթաթոշակներ

Սարին Տէր Գալուստեան, Մարալ Հաժժար, Արթուն Համալեան, Մարալ Ճէպէնեան, Հոնիսիմէ Ռուբէն, Լիլիթ Քիւրտեան, Սթիվ Սէմէրեան:

Համալսարանական Արտասահմանեան Փորձառութիւն

Սփիւտահայ համալսարանականներու համար Հայաստանի մէջ ուսանողական փորձառութեան առիթներ ստեղծելու նպատակով, մշակման ընթացքի մէջ է Հայաստանի եւ արտասահմանի համալսարաններու գործակցութեամբ, ուսանողական կիսամեայ կամ միամեայ դրութիւն մը, որ պիտի ֆաջալերէ, համալսարանական երիտասարդները Հայաստանի մէջ հետեւելու իրենց մասնագիտութեան վերաբերեալ դասընթացներու, միաժամանակ շարունակելով երկրի մշակոյթին եւ հանդիպելով հայրենի թէ՛ Սփիւտի այլ շրջաններէ եկող հայ երիտասարդութեան:



Երուանդ Զօրեան կը ներկայացնէ «ՀԲԸՄԻ Հայկական Համացանցային Դասընթաց»-ին նախատիպը:

Հայ Լեզուի, Պատմութեան եւ Մշակոյթի Համացանցային Ծրագիր

Անցեալ երկամեայ ժամանակաշրջանին ձեւ առաւ նաեւ իր տեսակին մէջ եզակի նախաձեռնութիւն մը՝ համացանցի դրութեամբ գործադրելի լեզուամշակութային ծրագիրը՝ (AGBU Virtual College): Արդէն պատրաստութեան ընթացքի մէջ է վեց լեզուներով եռամեայ դասընթացը, որ կ'ընդգրկէ հայ լեզուի, պատմութեան եւ մշակոյթի որակաւորեալ դասանիւթեր:



Փարիզի Ալեք Մանուկեան Շարաքօրեայ Վարժարան



Պէյրուքի Պօղոս Գ. Կարմիրեան Վարժարան

Կրթաթոշակներ

Տարուէ տարի, ՀԲԸՄԻ Կրթաթոշակներու Ծրագիրը շարունակարար նիւթական օժանդակութիւն կը հայթայթէ աշխարհասփիւռ հարիւրաւոր արժանի գոլէնի եւ համալսարանի ուսանող-ուսանողուհիներու՝ պարգեւներով եւ փոխատութիւններով:

2006ին եւ 2007ին բաժնուած պարգեւներու եւ կրթաթոշակներու գումարը՝ \$1,942,936

2006ին եւ 2007ին նպաստընկալ ուսանողներու թիւը՝ 988

ՀԲԸՄԻ Վարժարաններ

- ԱՄՆ**
 - Գալիֆորնիա Գանոկա Փարք
 - Մանուկեան-Տեմիքեան Վարժարան (K-12)
 - Փոսթա Մեաս Օրէնն Գաուկի Շարաքօրեայ Վարժարան Փաստօրհմա Երկրորդական Վարժարան (9-12)
 - Միչիկըն Տիքսոյթ
 - Ալեք եւ Մարի Մանուկեան Վարժարան (K-12)
 - Իլլինոյ Շիքագօ
 - Սիսակ Յ. Վարժապետեան՝ Շարաքօրեայ Վարժարան
 - Օհայօ
 - Գլիվլինտ Շարաքօրեայ Վարժարան
- ԱՐԺԱՆԹԻՆ**
 - Պուէնոս Այրէս
 - Մարի Մանուկեան Վարժարան (K-12)
- ԱՒՍՏՐԱԼԻԱ**
 - Սիտնի
 - Ալեքսանտր Նախկրթարան (K-6)
 - Ալեք Մանուկեան Շարաքօրեայ Դպրոց
- ԳԱՆԱՏԱ**
 - Մոնթրէալ
 - Արմէն Գեպեմ-Ալեք Մանուկեան Վարժարան (K-8)
 - Թորոնթօ
 - Դանիէլ եւ Ալիս Զարուկեան Վարժարան (K-6)
- ԻՐԱՆ**
 - Թեհրան
 - Մարի Մանուկեան Վարժարան (1-5)
 - Նուարդ Կիլպէնկեան Վարժարան (9-12)
- ԻՐԱՔ**
 - Պաղատ
 - Բուրաստան Ուրբաքօրեայ Վարժարան
- ԼԻԲԱՆԱՆ**
 - Պէյրութ
 - Պօղոս Գ. Կարմիրեան Վարժարան (K-9)
 - Դարուհի-Յովակիմեան Վարժարան (7-12)
 - Լեւոն Կ. Նազարեան Վարժարան (K-6)
- ՅՈՒՆԱՍՏԱՆ**
 - Աթէնք
 - Արթաքի Գալիսեան Վարժարան (K-6)
- ՌԻՐՈՒԿՈՒՆԵՑ**
 - Մոնթրէվիտէօ
 - Նուպարեան-Մանուկեան Վարժարան (K-12)
- ՊՈՒԼԿԱՐԻԱ**
 - Տոպրիչ
 - Շարաքօրեայ Վարժարան
 - Համբոլօ
 - Շարաքօրեայ Վարժարան
 - Փոլվտի
 - Շարաքօրեայ Վարժարան
 - Րուսէ
 - Շարաքօրեայ Վարժարան
 - Սիլիսթրա
 - Շարաքօրեայ Վարժարան
 - Սիվրն
 - Շարաքօրեայ Վարժարան
 - Եամպոլ
 - Շարաքօրեայ Վարժարան
- ՍՈՒՐԻԱ**
 - Հալէպ
 - Լազար Նանարեան-Գալուստ Կիլպէնկեան Վրժ. (K-12)
 - Դամասկոս
 - Կիլլայի Կիլպէնկեան Վարժարան (K-6)
 - Գամիշլի
 - Շարաքօրեայ Վարժարան
- ՖՐԱՆՍԱ**
 - Փարիզ
 - Ալեք Մանուկեան Շարաքօրեայ Վարժարան
 - Լիոն
 - Շարաքօրեայ Վարժարան
 - Վիէն
 - Շարաքօրեայ Վարժարան

ՄԵԼԳՈՆԵԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Անցնող շրջանին գործադրության փուլի մեջ մտաւ Մելգոնեան եղբայրներու Ատեսականին Հայաստանի մէջ վերականգնումի նախանշանները, որ խորհրդանշականօրէն անոնց հիմնական երազի իրականացումը կը հանդիսանար, տրուած ըլլալով որ եթէ ժամանակի փառաբանական պայմանները ձեռնառու ըլլային, անոնք Հայաստանի մէջ էր որ կ'ուզէին հիմնել կրթական հաստատութիւնը: Միջազգային համալսարանական ասանի յղացքէն ծնունդ առած Մելգոնեան այս համալիրը պիտի ըլլայ արդիական ծաւալուն կառոյց մը, որ կ'եցոյցնէ եւ դաստիարակչական մթնոլորտի լաւագոյն յարմարութիւններ պիտի ապահովէ 350-է աւելի անձնաւոր միաժամանակ:

Կառոյցը 16 հազար քառակուսի մետր տարածութեամբ բլրանիստ շինութիւն մը պիտի ըլլայ, երեսնի քարձրահայեաց տեսարանով եւ փառամեծ դիրքով: Անոր մաս պիտի կազմեն երեք եռաբարկ շէնքեր եւ երկու գետնայարկերու վրայ տարածուող ցուցասրահներ, թատերասրահ, լեզուի ուսուցման գիտաշխատանոց, ժողովասրահներ, բացօթեայ եւ ներքին նաշարան-սրնարաններ, մարզասրահ եւ տեղեկատուական արխիւային կեդրոն:

Մելգոնեան համալիրի գործունէութիւններէն գլխաւորը պիտի ըլլայ կազմակերպել եւ ֆաջակերել Հայաստանի համալսարաններու մէջ գործադրելի կիսամեայ կամ միամեայ մասնագիտական դասանիւթերու դրութիւն մը, որ կը ֆաջակերէ ուսանողները իրենց մասնագիտութեան վերաբերեալ կիսամեայ կամ միամեայ դասանիւթերու հետեւի իրենց բնակութեան երկիրներէն դուրս, ընդարձակելու համար իրենց մտահորիզոնը եւ փորձառութեան ծիրը:

Նման ծրագիրներու մշակումը Հայաստանի համալսարաններու կողմէ, միացած Հ.Բ.Ը.Մ.ի Մելգոնեան համալիրի ընձեռնած կարեւորութիւններուն, պիտի ֆաջակերէ սփիւտփայ ուսանող երիտասարդ-երիտասարդուհիները իրենց ուսումնական ծրագիրը հարստացնել հայրենիքի մէջ սպրելու եւ սփիւտփայ թէ հայրենասրահ տարրեր շրջանակներէ երիտասարդներու հետ շաղուելու եւ մտերմանալու փորձառութեամբ: Միաժամանակ անոնք պիտի մասնակցին Մելգոնեան Համալիրին մէջ գործադրուող լեզուի, պատմութեան եւ մշակոյթի խտացեալ ծրագիրներուն:

Մելգոնեան Համալիրի կառոյցէն ներս կը նախատեսուի նաեւ յատուկ բաժին ստեղծել Հայաստանի Հատրակի ֆէտէրասիոնին համար: Համալիրին մաս պիտի կազմէ նաեւ Հ.Բ.Ը.Մ.ի կողմէն Հեռավար Ուսման Գոյլէնի կեդրոնը:

Մելգոնեան Համալիրը իր արդիական կատարելագործուած կառոյցով եւ միջոցառումներով, պիտի հանդիսանայ կրթական, մշակութային եւ ընկերային ետուն գործունէութիւններու կեդրոն մը, ուր կարելի պիտի ըլլայ տարուան բոլոր եղանակներուն համախմբել սփիւտփայ նոր սերունդի երիտասարդներ, զանոնք շաղախելով հայրենիքի ֆիզիկական իրականութեան հետ, իրր դաստիարակութեան լաւագոյն միջոցառում:

*ՀԲԸՄ Կեդրոնական Վարչական Ժողովի
անդամ Արիս Աղամեան
Երեսնի մէջ կառուցուելիք Մելգոնեան
Համալիրի նախատեսուած ծրագիրը
կը ներկայացնէ Փետրուար 1-3, 2008ին
Պրինսէլ, Պելմիֆա տեղի ունեցած
համաներուպական համաժողովին:*

ԱՍՊԱՐԷԶԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Նիւ Եորքի Ասպարէզային Փորձառութեան Ամառնային Ծրագիր

